ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

" 15 " ապրիլի 2013թ. № 51- Ա

«ՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ և ԱՌԱՋԻՆ ԲՈՒԺՕԳՆՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱԲԵՐՈՒՄԸ «ԿԱՊԱՆԻ ԹԻՎ 13 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱԹՍԱՅԱՏԱՆ ՊԱՅԹՅՈՒՆԻՑ ՀԵՏՈ» ԹԵՄԱՅՈՎ ՑՈՒՑԱԴՐԱԿԱՆ ՀԱՏՈՒԿ ՏԱԿՏԻԿԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-ին կետով և «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածով, համաձայն Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2013թվականի փետրվարի 2-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի բնակչության պաշտպանության համակարգի նախապատրաստման 2013թ. հիմնական միջոցառումների պլանը հաստատելու մասին» N10-Ա որոշմամբ հաստատված պլանի 13-րդ կետի 13.1 ենթակետի և արտակարգ իրավիճակների նախարարության փրկարարական ծառայության Սյունիքի մարզային փրկարարական վարչության պետի 13.04.2013թ. N20-256 զեկուցագրի, **որոշում եմ՝**

1. «Փրկարարական աշխատանքների կազմակերպումը և առաջին բուժօգնության ցուցաբերումը «Կապանի թիվ 13 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության կաթսայատան պայթյունից հետո» թեմայով ցուցադրական հատուկ տակտիկական ուսումնական վարժության ղեկավար նշանակել Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Սյունիքի մարզային փրկարարական վարչության պետ, փ/ծ գնդապետ Ա. Հարությունյանին:
2. Ուսումնական վարժությունում ընդգրկել Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության Հայաստանի փրկարար ծառայության Սյունիքի մարզային փրկարարական վարչությունը, «Հայռուսգազարդ» ՓԲԸ Սյունիքի ԳԳՄ, ՀՀ ոստիկանության Սյունիքի մարզային վարչության Կապանի բաժինը, «Կապանի բժշկական կենտրոն» ՓԲԸ շտապ օգնության բրիգադը, ՀՀ Սյունիքի մարզի «Կապանի թիվ 13 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունը:
3. Ուսումնական վարժության ղեկավար Ա. Հարությունյանին՝
   1) ապահովել նախապատրաստական աշխատանքների իրականացումը, փաստաթղթերի մշակումը և ծանոթացումը ուսումնական վարժության մասնակիցներին:
4. Մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ Ս.ԽԱՉԱՏՐՅԱՆ

2013թ. ապրիլի 15
ք. Կապան